



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-015
Էլ. փոստ narek.khazaryan@justice.am

№ _____

«___» _____ 20 թ.

**archigalentz
@gmail.com**

ԶԱՂԱՔԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼԵՆՏԻՆ

Հարգելի պարոն Գալենց

ՀՀ արդարադատության նախարարին ուղղված Ձեր՝ 2018թ. նոյեմբերի 29-ի թիվ 100/261927-18 առցանց դիմումի վերաբերյալ հայտնում եմք, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Հետևաբար, դիմումում նշված հարցերի լուծումը դուրս է ՀՀ արդարադատության նախարարության՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածի 3-րդ մասում ամրագրված իրավասության շրջանակներից:

Միաժամանակ դիմումի և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ թիվ ԵԴ/5713/02/18 քաղաքացիական գործը գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում և հաջորդ դատական նիստ է նշանակված 25.01.2019թ., իսկ թիվ ԵԱԲԴ/4697/02/17 քաղաքացիական գործը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան:

Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 2-րդ մասի համաձայն՝ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

Ավելին, ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Բացի այդ, հիշյալ օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ, իսկ հիշյալ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ դատարանի կամ դատավորի գործունեությանն որևէ միջամտությունը կամ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Ուստի, որևէ պետական մարմին կամ պաշտոնատար անձ իրավասու չէ միջամտել կամ հսկողություն իրականացնել դատարանի գործողությունների նկատմամբ:

ՃԱՐԳԱՆՔՈՎ՝



ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ